49 Քու սերդ մի՞թե մոռնանք, Հիսո՛ւս,

1. Քու սերդ մի՞թե մոռնանք, Հիսո՛ւս,
Բնավ ալ չհիշե՞նք,
Սերն, որ հատոյց մեր պարտքն անհույս
Եվ որ ջնջեց մեր մեղք:
Մոռնա՞նք Քո վշտալից կյանքն ևս,
Աղոթքդ քրտնալից,
Ցողով ցողված գլուխդ, որ մեզ
Պահեց միշտ հուսալից:

2. Գեթսեմանին կրնա՞ք մոռնալ
Եվ ճիգդ՝ տագնապոտ,
Երբ լեռն պատեց ահեղ խավար,
Եվ մարդ չկար Քեզ մոտ:
Կրնա՞նք մոռնալ փշե պսակ,
Ամոթն և ապտակներն,
Երբ դեմդ ելավ դժոխք վայրագ,
Երկիր մերժեց Քու սերն:

3. Ո՜հ, Քու շնորհաց վառ հիշատակ
Պիտ քաղցրագույն ըլլա,
Մեր սրտերուն մինչ ի հատակ
Դեմքիդ նկարն ցոլա:
Մոռնալ կրնա՞նք կենաց ցնծումն,
Մոռնալ աշխարհ համայն,
Բայց չենք մոռնար Քու սերդ անհուն
Հիմա և հավիտյան: